# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

**<<ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի (շարունակություն)**

**ք. Երևան** _19_ _հունիսի_ _2019թ._
ժամը _12$^{00}$_

Մասնակցությամբ՝
Հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Շահնազարյան**
Հանձնաժողովի անդամներ՝ **Հ. Մանուկյան**
**Վ. Մամիկոնյան**
**Տ. Սաֆարյան**
Հանձնաժողովի քարտուղար՝ **Պ. Գաբրելյան**
Բացակայում է՝ **Ա. Քոսակյանը**

**1. <<ԳՀԱՇՁԲ-2019/1-ԵՊԲՀ>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի թիվ 3 չափաբաժնի մասով ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու իրավունքից զրկելու մասին**

1.1 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի թիվ 3 չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչված <<Լ.Ա.Պ.Ա.>> ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, գնահատող հանձնաժողովը որոշեց <<Լ.Ա.Պ.Ա.>> ՍՊԸ-ին զրկել պայմանագիր ստորագրելու իրավունքից:

1.2 Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետով՝ ընտրված մասնակցի տվյալները գրավոր ներկայացնել լիազորված մարմին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

1.3 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց վերելակի հորանի կառուցման (վերելակի տեղադրումով) աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<ԱԳԱԹ-777>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**2. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին**

2.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 2.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

**3. Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի անուն-ազգանունները և ստորագրությունները**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | _______________ (ստորագրություն) | **Ա. Շահնազարյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | _______________ (ստորագրություն) | **Հ. Մանուկյան** |
| | _______________ (ստորագրություն) | **Վ. Մամիկոնյան** |
| | _______________ (ստորագրություն) | **Տ. Սաֆարյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | _______________ (ստորագրություն) | **Պ. Գաբրելյան** |